

Պրուշի թագաւորութեան մէջ՝ Սաքսոնիա, Վեսթֆալիա, Բոմբերանիա, և այլն : Վալաքիա և Մոլտաւիա : Սարտենիոյ աւերութեան մէջ՝ Սարտենեա, Ճենովա : Երկուց Սիկիլեայց մէջ՝ Սիկիլիա, Փուլիա, Գալապրիա, և այլն : Պաւիերայի մէջ՝ Իսար, և այլն : Հռովմոյ սահմանին մէջ՝ Ֆորլի, և այլն : Նորվեկիոյ ու Հուսթի թագաւորութեան միջ՝ Սմայէլանա, Պոհոու՝ Հուսթի մէջ : Գոնուպերկի՝ Նորվեկիոյ մէջ : Զոնիական կղզիներուն մէջ՝ Սանդա-Մաւրա : Յունաստանի մէջ՝ Նաքսոս կղզին :

ՓԼԱԴԻՆ : — Ռուսի ինքնակալութե մէջ՝ Բերմ : ՄԱՐՄԱՐԻՈՆ : — Իտալիա, Գաղղիա, Սպանիա, Պելճիա, Գերմանիա, և այլն :

ԾԾՈՒՄԲ : — Իտալիա, Սպանիա, և այլն :

Եւրոպայէն հիմայ որչափ արծաթ որ կ'ելլէ՝ այս դարու սկիզբը Ամերիկայէն անկէ տասնըմէկ անգամ աւելի կ'ելլէր . իսկ ոսկին ալ աւելի էր, բայց վերջէն Եւրոպա ոսկոյ հանքերը շատցան . վասն զի հիմայ միայն Ռուսաստան՝ Կովկասի ոսկոյ ու փլազիին նոր հանքերէն Եւրոպայի ոսկոյն եօթնին վեցը կը մատակարարէ, Մաճառասան ու Թրանսիլվանիա՝ եօթնին մէկը : Անգղիա, որ հասարակ մետաղներու կողմանէ ճոխ է, աղնիւ մետաղները շատ նուազ են . Եւրոպայի երկաթին երրորդ մասը իրմէ կ'ելլէ, չորրորդ՝ Ռուսաստանէն, հինգերորդը Գաղղիայէն, տասներորդը՝ Հուսթեան, մնացածն ալ ուրիշ տերութիւններէն : Անգղիոյ երկաթը թէպէտ ազնիւ չէ, բայց շատ ածան է . Ռուսաստանի ու Զուլիցերիի երկաթը շատ ազնիւ է, մանաւանդ պողպատ շինելու համար . Գաղղիայէն թէ աղէկ երկաթ կ'ելլէ և թէ գէշ : Եւրոպայի մէջ մեքենայ, անօթ, և այլն, շինելու համար թափօն ձեռագործներուն վեցին հինգը Անգղիոյ գործարաններէն կ'ելլէ, տասնին մէկը Գաղղիայէն, և քառասունին մէկը Պրուշին . Ռուսաստանէն ու Հուսթեան քիչ կ'ելլեն : Եւրոպայի բոլոր հանքերուն մէջէն չորսին իրեքը երկաթ է . իսկ ոսկին, արծաթն ու փլազիը՝ մէկ իններորդն են : Եւրոպայի մէջ գործածուած կապարին կէսը Սպանիայէն կ'ելլէ, և եօթնին իրեքը՝ Անգղիայէն . իսկ Գաղղիայէն ու Գերմանիայէն իրենց ընդարձակութեանը համեմատ քիչ կ'ելլէ : Անգղիան տասնպատիկ աւելի քան զԳաղղիան հանքային ածուխ կը բերէ, Պելճիան ու Պրուշը՝ մէկ ու կէս անգամ աւելի : Եւրոպայի պղինձին գրեթէ կէսէն աւելին Անգղիայէն կ'ելլէ . նոյնպէս անագին տասուրեքին տասուերկուքը Անգղիայէն կ'ելլէ, մէկ հինգերորդը՝ Ռուսաստանէն, տասնին մէկը՝ Հուսթեան, իսկ Գաղղիայէն ամենաքիչ կ'ելլէ :

Ա Ռ Ա Կ

Փիղ և Դիւն :

Րնդ պողոտայս փիղ ածէին
Հասարակաց 'ի հանդէս,
Քանզի առ մեզ յաղթ կենդանին
Հազիւ երբէք գայ 'ի տես :
Խրոնէր խուժան ըզհետ փրղին
Ի վիթխարին կալեալ դէտ .
Բայց և շննիկ մի ել շննչին
Դէմ կենդանոցն անհետեթ .
Տեսեալ ըզփիղն ընդ ամբոխին
Հաջէր ճըչէր վազվազէր,
Խուն ինչ մեկնէր, դառնայր կըրկին,
Փիղն անխրուով յառաջէր :
“ Ը՛ խայտաւակ գրծուծդ 'ի շանց,
Գոչեաց առ նա այլ մի շուն .
Ի փիղ հաջել 'ի սիգապանծ
Ղէ քեզ 'ի ճահ քաջութիւն .
Ո՛չ տեսանես, մինչ գաս 'ի վէգ
Բնդ հըսկայիդ պնդակուշտ,
Դա քեզ չառնէ երես երբէք,
Չայնիդ չանսայ բանդագուշտ ,
“ Ը՛ հա այդ իսկ է իմ խրախոյս,
Կըրկնեաց շննիկն ըզբարբառ,
Օ՛ր դէմ փրղին ես սինըբորս
Համարձակիմ 'ի պայքար .
Օ՛րնէն այլ շունք առցեն ճառել,
Թէ վաշ շննիկ քաջարի,
Որ անվեհեր 'ի կրուիւ ել
Բնդդէմ փրղին վիթխարի ,”

ԲԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ՔՐԻԼՈՎԷ
ՍՏԵՓԱՆ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ
ԲԻՒԿ ԵՓՈՒՍԵՑԻ